ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ք. Երևան 24.06.2022թ.

«ԻՄԷՔՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ (այսուհետև՝ Կապալառու) ի դեմս տնօրեն Ռ. Մանուչարյանի, ով գործում է կանոնադրության հիման վրա, մի կողմից, և ՀՀ շրջակա միջավայրի նախարարության անտառային կոմիտեն, (այսուհետև՝ Պատվիրատու), ի դեմս գլխավոր քարտուղար Է. Սեհինյանի, ով գործում է կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, (Պատվիրատուն և Կապալառուն միասին հիշատակվելու դեպքում, այսուհետ՝ Կողմեր, իսկ առանձին-առանձին, այսուհետ՝ Կողմ), կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Կապալառուն պարտավորվում է Պատվիրատուի առաջադրանքով,ք. Երևան, Արմենակյան 129 հասցեում կատարել պայմանագրի անբաժանելի մասը կազմող Հավելված 1-ում նշված աշխատանքները, այսուհետ՝ Աշխատանք, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել աշխատանքի արդյունքը և վարձատրել դրա համար:

1.2. Պայմանագրով նախատեսված Աշխատանքը կատարվում է ՀՀ օրենսդրությանը, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող N1 հավելվածով նախատեսված աշխատանքի ծավալաթերթին համապատասխան:

1.3. Պայմանագրով նախատեսված Աշխատանքը սկսվում է պայմանագրի ամբողջ գումարը Կապալառուի հաշվեհամարին մուտքագրվելուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում և տևում է տասը աշխատանքային օր՝ համապատասխան տարածքը Պատվիրատուի կողմից ապահովելու դեպքում:

1.4.Կապալառուն կարող է Պատվիրատուի համաձայնությամբ աշխատանքն ավարտել ժամկետից շուտ:

1.5. Պայմանագրում նշված Աշխատանքի կատարման ժամկետները կարող են փոփոխվել Կողմերի համաձայնությամբ՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

2.Կապալառուի միջոցներով աշխատանքները կատարելը

2.1. Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2.Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. Կողմերի իրավունքները և պարտականությունները

3.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ստուգել Կապալառուի իրականացրած Աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը:

3.1.2՝ Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետում աշխատանքը չավարտելու դեպքում սահմանել Աշխատանքի կատարման նոր ողջամիտ ժամկետ:

3.1.3 Լիազորել այլ անձի՝ Աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Կապալառուին:

3.2 Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Պայմանագրով նախատեսված ժամկետում Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից շեղումներ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին:

3.2.2 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 1 /մեկ/ աշխատանքային օրվա ընթացքում ապահովել Կապալառուի աշխատակիցների Աշխատանքի իրականացման վայր մուտք գործելը:

3.2.3 Պայմանագրով նախատեսված ժամկետում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3 Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Մինչև Աշխատանքը Պատվիրատուին հանձնելը ցանկացած ժամանակ հրաժարվել պայմանագրի կատարումից առնվազն 5 օր առաջ այդ մասին գրավոր տեղեկացնելով Պատվիրատուին:

3.4 Կապալառուն պարտավոր է՝

3.4.1. Աշխատանքները կատարել պայմանագրով նախատեսված ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով:

3.4.2. Կատարել պայմանագրի առարկայի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3. Իր ուժերով և միջոցներով տարածք տեղափոխել բոլոր անհրաժեշտ սարքերը, գործիքները, իր կողմից տրամադրվող նյութերը և տեխնիկան:

4. Աշխատանքի հանձնման և ընդունման կարգը

4.1 Աշխատանքների ընդունումն իրականացվում է հանձնման-ընդունման ակտով:

4.2. Աշխատանքներն ավարտելուց հետո Կապալառուն Պատվիրատուին ներկայացնում է կատարված աշխատանքների հանձնման-ընդունման ակտ՝ երկու օրինակից, և հաշիվ-ապրանքագիրը:

4.3. Հանձնման-ընդունման ակտը և հաշիվ-ապրանքագիրը ստանալու օրվանից երեք օրվա ընթացքում Պատվիրատուն ուսումնասիրում է և ստորագրում է դրանք կամ առարկությունների առկայության դեպքում Կապալառուի հասցեով առաքում է համապատասխան փաստաթղթերը չստորագրելու վերաբերյալ պատճառաբանված առարկություն: Նշված ժամկետում Հանձնման-ընդունման ակտը և հաշիվ-ապրանքագիրը չստորագրելու և հիմնավորված առարկություններ չներկայացնելու դեպքում, դրանք համարվում են ստորագրված, և կատարված աշխատանքը համարվում է ընդունված:

4.4. Հանձնման-ընդունման ակտի և հաշիվ-ապրանքագրի վերաբերյալ առարկությունների առկայության դեպքում Պատվիրատուն պետք է Կապալառուի հասցեով առաքի համապատասխան փաստաթղթերը չստորագրելու վերաբերյալ պատճառաբանված գրություն:

4.5. Աշխատանքը պայմանագրին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքները:

4.6. Եթե Աշխատանքի ընդունման ժամանակ պարզվի, որ անհրաժեշտ է, ի տարբերություն սկզբնական նախագծային փաստաթղթերի, լրամշակել կամ փոփոխել Աշխատանքի առանձին պայմանները, ապա այդ աշխատանքները կատարվում են լրացուցիչ համաձայնագրով՝ նշելով դրանց կատարման ժամկետը և արժեքը:

5. Պայմանագրի գինը և վճարման կարգը

5.1. Պայմանագրի գինը կազմում է 65,576 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ:

5.1.1. Պատվիրատուն վճարումն իրականացնում է լրիվ, նախապես վճարելու ձևով (ներառյալ ավելացված արժեքի հարկը՝ 20%), որը Պատվիրատուն փոխանցում է Կապալառուի նշած բանկային հաշվին՝ պայմանագիրը ստորագրելուց 5 /հինգ/ բանկային օրվա ընթացքում:

5.2. Աշխատանքի գները ներկայացված են պայմանագրի N1 հավելվածում: Պայմանագրի գինը կարող է փոփոխվել կողմերի համաձայնությամբ կազմված լրացուցիչ համաձայնագրով, աշխատանքի ծավալի փոփոխության դեպքում:

6. Կողմերի պատասխանատվությունը

6.1.Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2.Կապալառուի կողմից աշխատանքի կատարման ժամկետը հինգ օրից ավել խախտելու դեպքում Պատվիրատուն իրավունք ունի Կապալառուից գանձել տույժ՝ հինգ օրից ավել ուշացած յուրաքանչյուր օրվա համար պայմանագրի չկատարված մասի գնի 0,01 տոկոսի չափով:

6.3.Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.1.1. կետերով նախատեսված ժամկետների խախտման համար Կապալառուն իրավունք ունի Պատվիրատուից գանձել տույժ՝ կետանցի յուրաքանչյուր օրվա համար վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,01%-ի չափով:

6.4. Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
6.5.Տուժանքի վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 1 (մեկ) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես գրավոր տեղյակ պահելով մյուս կողմին:

8. Եզրափակիչ դրույթներ

8.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից:
Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի ստորագրությամբ և կնիքով հաստատված գրավոր համաձայնության:
8.2. Պայմանագիրը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ: Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:
8.3. Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ, նոր համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:
8.4. Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:
3.5 Պայմանագիրը կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N1 հավելվածը համարվում է պայմանագրի անբաժանելի մասը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պատվիրատու	Կապալառու
Շրջակա միջավայրի նախարարության	«ԻՄԷՔՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ
Անտառային կոմիտե	Ք. Երևան, Թբիլիսյան խճուղի 25
ք. Երևան, Արմենակյան 129	ՀՎՀՀ 00847479
հ/հ 900011023265	հ/հ 20500220930710001
Թիվ 1 գանձապետական բաժանմունք	«Ինեկոբանկ» ՓԲԸ
	Տնօրեն՝ Ռ. Մանուչարյան
Գլխավոր քարտուղար՝ Է. Մեհինյան	

Հավելված 1
24.06.2022 թվականի կապալային աշխատանքների կատարման պայմանագրի
ՆԱԽԱՀԱՇԻՎ

Շրջակա միջավայրի նախարարության
Անտառային կոմիտեի սան. սարքերի մոնտաժ

Աշխատանքների/նյութերի անվանումը	ՉՄ	Քանակ	Գին ՀՀ դրամ ներառյալ ԱԱՀ	Գումար ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ
Զուգարանակոնք-ROSA WC KOMFORT X TRAPE WHITE	ՀԱՏ	1	47656	47656
Զուգարանակոնքի գոֆրե-025-0148 PLASTIC PIPE CONNECTION FOR W.C.D110, L231-550MM	ՀԱՏ	1	2294	2294
Ճկուն խողովակ-AL 5 WFX SS 12F.12F 600	ՀԱՏ	1	1628	1628
Փական-NOV01 A-80 NOVA 1/2X1/2 S/T C/DOBLE	ՀԱՏ	1	1998	1998
Ընդամենը նյութեր				**53576**
Աշխատանքներ				
ԶՈՒԳԱՐԱՆԱԿՈՆՔԻ ՏԵՂԱԴՐՈՒՄ	ՀԱՏ	1	5833.3	5833.3
ՍԱՆ ՍԱՐՔԵՐԻ ԱՊԱՄՈՆՏԱԺՈՒՄ	ՀԱՏ	1	4166.7	4166.7
Ընդամենը աշխատանքներ				10,000
Ա.Ա.Հ. 20%				2000
Հանրագումար				12,000
Ընդամենը աշխատանքներ և ապրանքներ				**65576**

Պատվիրատու
Շրջակա միջավայրի նախարարության
Անտառային կոմիտե
ք. Երևան, Արաբկիրի 129
հ/հ 900011023265
Թիվ 1 գանձապետական բաժանմունք

Գլխավոր քարտուղար՝ Է. Սեֆինյան

Կապալառու
«ԻՄԷՔՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ
Ք. Երևան, Թբիլիսյան խճուղի 25
ՀՎՀՀ 00847479
հ/հ 2050022093071001
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Տնօրեն՝ Ռ. Մանուչարյան

Հավելված 1

24.06.2022 թվականի կապալային աշխատանքների կատարման պայմանագրի

ՆԱԽԱՀԱՇԻՎ

Շրջակա միջավայրի նախարարության
Անտառային կոմիտեի սան. սարքերի մոնտաժ

Աշխատանքների/նյութերի անվանումը	ՉՄ	Քանակ	Գին ՀՀ դրամ ներառյալ ԱԱՀ	Գումար ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ
Զուգարանակոնք-ROSA WC KOMFORT X TRAPE WHITE	ՀԱՏ	1	47656	47656
Զուգարանակոնքի գոֆրե-025-0148 PLASTIC PIPE CONNECTION FOR W.C.D110, L231-550MM	ՀԱՏ	1	2294	2294
Ճկուն խողովակ-AL 5 WFX SS 12F.12F 600	ՀԱՏ	1	1628	1628
Փական-NOV01 A-80 NOVA 1/2X1/2 S/T C/DOBLE	ՀԱՏ	1	1998	1998
Ընդամենը նյութեր				**53576**
Աշխատանքներ				
ԶՈՒԳԱՐԱՆԱԿՈՆՔԻ ՏԵՂԱԴՐՈՒՄ	ՀԱՏ	1	5833.3	5833.3
ՍԱՆ ՍԱՐՔԵՐԻ ԱՊԱՄՈՆՏԱԺՈՒՄ	ՀԱՏ	1	4166.7	4166.7
Ընդամենը աշխատանքներ				10,000
Ա.Ա.Հ. 20%				2000
Հանրագումար				12,000
Ընդամենը աշխատանքներ և ապրանքներ				**65576**

Պատվիրատու
Շրջակա միջավայրի նախարարության
Անտառային կոմիտե
ք. Երևան, Արաբկիրի 129
հ/հ 900011023265
Թիվ 1 գանձապետական բաժանմունք

Գլխավոր քարտուղար՝ Է. Սեֆինյան

Կապալառու
«ԻՄԷՔՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ
Ք. Երևան, Թբիլիսյան խճուղի 25
ՀՎՀՀ 00847479
հ/հ 2050022093071001
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Տնօրեն՝ Ռ. Մանուչարյան